


## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



Փրիդերիկոս Բ , Բարուսաց թագաւորը :

Ենթաւաւ դարուն խիստ երևելի մարդիկներէն մէկն է մեծն Փրիդերիկոս Բրուսաց թագաւորը , և իրեն վրայ համառօտ տեղեկութիւն մը առնելով կ'իմանայ մարդ նաև Բրուսիայի մեծնալուն սկիզբն ու պատճառը : Ո՞իայն ան մարդիկը արժանի են նէծ ըսուելու , որ իրենց մեծութիւնը հետերնին գերեզման չեն տանիր , հապա իրենց ազգին կամ բոլոր աշխարհիս մեծութեան ու ծաղկելուն պատճառ կ'ըլլան : Խոնց կարգէն է ահա նաև Փրիդերիկոս Բ , Բրուսիայի թագաւորը :

Խնդը ծնաւ Պիերին մայրաքաղաքը 1712ին յունուարի 24ին . և իրեն դաստիարակը գաղղիացի ըլլալով , սըրտին մէջ մեծ սէր մը մտած էր ընդհանրապէս Պաղպիացւոց վրայ : Զարմա-

նալի բան մըն է որ աս իշխանը թագաւորութեան ատեն բոլոր իր կեան քը պատերազմի մէջ անցուց , իսկ պզտիկուց սաստիկ կը խորշէր զինուորական կարգէն ու պատերազմէ կը զզուէր . անոր համար ինքզինքը բոլորովին ուսման տուեր էր . այնպէս որ իր հայրը Փրիդերիկոս Պաուլիկը միշտ կը գանգըտէր ու կ'ըսէր թէ՝ Կայութան իմ թագաւորութիւն պիտի կործանէ „ : Շայց երբոր 1740ին մայիսի 31ին թագաւորութիւնը ձեռք առաւ , բոլորովին իր կերպը փոխեց , և որոնք որ կարծէին թէ ինքը աշխարհիս բաներէն ամենելին չհասկըցող մարդ մըն է՝ շատ խաբուեցան . վասն զի թագաւոր պսակուելուն պէս սկսաւ քաղաքական ու զինուորական կը թութեանց ետևէ ինալ : Ծխագաւորա-

կան գանձին ու զինուորութեղ կարգեր կանոններ դրաւ . և առաջուց որ Շրուտիայի զօրքը 60,000 էր , Փրիդերիկոս ինչուան 80,000 ըրաւ . ան երեւելի զօրապետներն ալ որ ուրիշ տէրութեանց մէջ անուն ըրած էին՝ քովը կանչեց ու շատ առաջ քաշեց : Կոյն ատենները կարուս Զ , Աւտրիայի կայսրը մեռնելով իրեն տէրութեանը ժառանգ թողուց իր աղջիկը Ուարիամ Յաներեղան : Եւ որովհետեւ Աւտրիայի զօրքը շատ տկարացած էր՝ մանաւանդ Աւգինէս զօրապետին մեռնելցն ետքը , ուրիշ տէրութիւններ Ավտրիայի խեղջ վիշակը տեսնելով կարծես թէ առթիմը կը կըսպասէին որ իրենց մէյմէկ բաժին առնուն անկէ . և ասոնց մէջ գրեթէ առաջինն եղաւ Փրիդերիկոսը , որ 1741ին ապրիլի 10ին Ավտրիացոց հետ զարնուեցաւ վերին Շլեզիային մէջ ու յաղթեց անոնց : Քաջորդ տարին ալ Առենայի դքսին զօրքը ցրուեց ու փախուց Վրասլաւքալքին քովերը : Եւրոպայի ուրիշ տէրութիւններն երբոր տեսան Փրիդերիկոսին ըրածները , անանկ երեցաւ որ անոր կողմը բռնել կ'ուզէին . բայց 1756ին մայիսի 9ին խորհուրդնինին փոխեցին , և Պաղպիան , Ավտրիան , Ուուսիան ու Ուաքսոնիան միացան Փրիդերիկոսի դէմ , ու առջի անգամ յաղթեցին անոր Վոլին քաղքին մօտերը :

Փրիդերիկոս աս բանիս վրէժը առնելու համար նախ վազեց Պաղպիացոց զօրքը Ուուսպաքի մօտ ցրուեց , և 33,000 զօրքով 60,000 աւստրիացին ու լորենացի զօրաց յաղթեց . աս պատերազմներուս մէջ զօրքին զօրապետը միշտ ինքը կ'ըլլար , և թշնամեաց երկիրը աղէկ մը գիտելէն առաջ անոնց վրայ չերյարձըկէր : Տրեգտա քաղքին մէջ Ավտրիայի ու Ուուսի զօրքերէն պաշարուիլը երբոր իմացաւ , ամեննեին չչփոթեցաւ , ու հանդարտ սրտով ամէն բան հրամայելով թշնամիները փախուց , որոնք կարծէին

թէ ալ իրենց ձեռքէն ազատելիք չունի : Փրիդերիկոս ասկէ փառաւոր յաղթութիւն չէր ըրած կենացը մէջ : Փրիդերիկոսին հասակը կարծ էր , բայց բնութիւնը խիստ վառվըռուն . կազմուածքը տկար կ'երեւար , բայց աշխատութեանց շատ կըտրիցաւ , Ավսէր թէ մարդ բանի մը ձեռք զարնելէն առաջ պէտք է աղէկ մտածէ անոր հետեանքը . բայց մէյմը սկսելէն ետքը պէտք է շուտով գլուխ հանէ : Հիմակուան Ավրոպացւոց պատերազմական արհեստին առջի օրինակ տուողը Փրիդերիկոսն եղաւ . ինքը անձամբ փորձեր ընել կու տար իր զօրքին . և իրեն դրած զինուորական կարգերը սկսան բաննեցընելնաև բոլոր Ավրոպայի տէրութիւնները , և նաև Աափոլէոնը , և ինչուան հիմա նոյն կանոններով կ'երթայ զինուորական արհեստը : Ուեռաւ Փրիդերիկոս 1788ին օգոստոսի 17ին , և թաղուեցաւ Փոցտամքալքին պալատին մէջ : Աափոլէոն Պոնափառթէ 1806ին , հոկտեմբեր ամսուն Անայի պատերազմին մէջ Բրուսաց յաղթելէն ետքը երբոր Պիերլին գնաց , տեսնելով երկըցոց անատենի խեղջութիւնը՝ միտքը եկաւ մեծին Փրիդերիկոսի ժամանակին փառաւորութիւնն ու կարծես թէ ինքն ալ խեղջաց : Անքը Աափոլէոն միշտ կը զարմանար ան մարդուն խելքին ու քաջութեանը վրայ , և կընախանձէր որ գրեթէ բոլոր ութուտասներորդ դարը Փրիդերիկոսին անունովը լըցուած էր : Դնաց Փոցտամքալքալքը՝ միայն անոր համար որ Փրիդերիկոսին գերեզմանը տեսնէ . և հոկտեմբերի 26ին հասարակ զօրավարի հագուստով ու հետը չորս հինգ հոգի միայն առածք ելաւ գնաց , տեսաւ որ գերեզմանին պահապան կեցած էր բրուսացի ծեր զինուոր մը , որ Փրիդերիկոսին շատ պատերազմներուն մէջ գտնուեր էր ատենով : Աափոլէոնին սիրուելաւ տեսնելով ան զինուորը որ բոլոր կեանքը Պաղպիացւոց դէմ պատերազմնելով անցունելէն ետքը հի-

մա կըտեսնէր որ անոնք իրեն տիրոջը Փրիդերիկոսին մայրաքաղաքին ալ տիրեր են : Երբոր զինուորը շիրմին վանդակապատ դուռը բացաւ, Ափոլէոն քանի մը աստիճան ալ վար իշաւ ու մօտեցաւ շիրմին, ու թեւերը ծալլած կեցաւ, սկսաւ մտածել տասը վայրկեանի չափ . անշուշտ աշխարհիս ունայնութեանը վրայ կը մտմտար, որ մեծ մարդիկ ալ ինչպէս ափ մը հողով կը ծածկուին, որ իրենց կենդանութեան ատենը կարծես թէ բոլոր աշխարհիս մէջ չէին մեկներ :

Ինչպէս ամէն մեծամեծ մարդկանց, նմանապէս մեծին Փրիդերիկոսի վրայ ալ շատ խելք սորվելու պատմութիւններ կը պատմուին որ հոս ամփոփելը դժուար է . առ այժմ երկու իրեք հատ մը դնենք որ իր վեհաճանձնութիւնը կը ցուցընեն :

Փրիդերիկոս օր մը տեսաւ իր նեղքին պաշտօնեաներէն մէկը որ կտրիմ պատմի մըն էր, որ աթոռի մը վրայ անհանգիստ կերպով կը քննանար . քով գնաց որ արթընցնէ, տեսաւ որ ծոցը թուղթ մը կայ՝ ծայրը դուրս ելած . կամացուկ մը թուղթը քաշէց, տեսաւ որ նամակ մըն էր որ ան կտրիմին մայրը գրեր էր, չնորհակալ ըլլալով որդւոյն՝ իր թոշակին կէալ անոր իրկելուն համար : Աս տեսնելով զարմացաւ տղուն առաքինութեանը վրայ, և թղթին մէջ շատ մը ստակ պըլ լելով՝ նորէն անոր ծոցը դրաւ : Երբոր անիկայ արթընցաւ, տեսնելով ծոցի ստակը՝ սկսաւ վախնալ . բայց թագաւորը զինքը միմիմարեց ու մօրն ու տղուն առատ եկամուտ մը կապեց :

Երբոր եօննամեայ պատերազմը լմինցաւ, Փրիդերիկոս իր զօրքերէն շատը ետ ձամբեց . ասոնց զօրավարներէն մէկը շատ անդամ պաշաճնէ ըստ թագաւորին որ զինքը նորէն իր պաշտօնին մէջ հաստատէ . թագաւորը անոր աղաքանէներէն ձանձրանալով, հրամեց որ մէյմն ալ գայ նէ՝ իր գիմազը չհանեն : Քիչ ատենէն թագաւորին գէմ գրուածք մը հրատարակեցաւ . և որչափ որ Փրիդերիկոս անհոգ կը լըսպար աս բանիս, գրողն ալ աւելի լըսպացաւ, ինչուան թագաւորը հրամեց թէ ովք որ իմացնէ իրեն ան բանը գրողը յիսուն ոսկի վարձք պիտի առնու : Ալրոյիշեալ զօրապեալ օր մը պալատը եկաւ, ու թագաւորին իմաց ընել տուաւ թէ հարկաւոր բան մը ունիմիրեն զուցելու : Ելաւ թագաւորին գիմազը և ըստաւ անոր . աչէր արքայ, դու մեծ վարձք խոստացեր էիր ան մարդուն որ քեզի իմացնէ ան թուղթը գրողը . ահա ես եմ անիկայ : Ինչպէս որ կուզես պատժէ զիս ու սպաննէ . միայն տուած խօսքդ պահէ, ու երբոր զիս մեռցընես՝ ան խոստացած ստակդ խըրկէ իմ խեղճ կնող ու որը տղոցս ” : թագաւորը բարկացած, “ Ծուտ գնա, ըստ, Սփանտաւ բեր-

թը, որ հոն տեսնես թէ թագաւորի գէմ բան դրողին վերջը ինչ կըլլայ : — Հնազանդ եմ հրամանիդ, աէր արքայ, ըստ զօրավարը . բայց ան յիսուն ոսկին շմունաս : — Երկու ժամէն էս կնկանդ կրիստում, ըստ թագաւորը . դուն աս թուղթն ալ առ, Սփանտաւի վերակացուին տուր, և ըսէ որ կերակրի նստելչն առաջ թուղթը չքանայ ” : Զօրապեալ եւալ գնաց ան սոսկալի բեր դը, և թուղթը վերակացուին յանձնեց . Երբոր սեղանը լմիննալու վրայ էր՝ վերակացուն բացաւ թուղթը, տեսաւ որ մէջը այսպէս գրած էր . “ Սփանտաւ բերդին վերակացութիւնը կը յանձնեմ աս թուղթը բերողին, և ինքը շուտով դառնայ ու առնէ իր յիսուն ոսկին ու կնիկը . իսկ գու որ ան տեղին վերակացուն ես՝ ուրիշ պաշտօնի պիտի անցնիս քու հաւատարիմ ծառայութեանդ փոխարէն ” :

Օր մը Փրիդերիկոս պալատին պատուհանէն նայելու ատէն կըտեսնէ որ խելմը մարդիկ մէկ տեղ գողիկը ու պատի մը վրայ կպցուցած թուղթ մը կը կարդան : Թագաւորին հետաքրքրութիւնը կը շարժի, ու ծառաներէն մէկը կը կանչէ, կըսէ թէ “ Գնանայէ սրւոնց կարգացածը ինչ է ” : Ծառան կ'երթայ կըտեսնէ որ թագաւորին գէմ գրուածք մըն է . Կուգայ իրեն իմաց կուտայ : Թագաւորը առանց այլայլուն ծառային կ'ըսէ . “ Գնա ան թուղթը աւելի ցած աեղ մը կը պցուրը՝ որ ամէնքը դիւրաւ կարենան կարգալ ” :

## ԱՇԽԱՄՀԱԴՐՈՒԹԻՒՆ

**Պարայիմ ըսուած Հրէից վրայ համառօտ տէղէկութիւն :**

Հրէիծ ազգը ամէն տեղ ցրուած, բայց ամէն տեղալ իր մասնաւոր բնաւորութիւնները պահած է, և անոնցմով օտար ազգերուն խորչելի ժողովուրդ մը սեպուած է : Ո՞իայն Պարայիմ ըսուած ցեղը կայ որ թէպէտ քիչւոր է, բայց բնաւորութիւնը սովորութեամբ շատ տարբեր է մէկալ Հրէաներէն : Այս Պարայիմները սուրբ գլքին միայն կը հաւտան, և անոր համար Պարայիմ ըսուած են . վասն զի գարեբրայեցերէն գիրք կամ ընթերցուած ըսել է . ուստի չեն ընդունիր թալմուտը և բարբիներուն գրուածքները՝ որ ուրիշ Հրէից առջել գրեթէ աստուածաշնչին հաւասար կը սեպուին . անոր համար ալ Հրեաներն ու Պարայիմները իրարու թըշ-